

## ԿԱՐԾԻՔ

Նարեկ Միքայելի Մարտիրոսյանի «Օսմանյան խորհրդարանի հայ պատգամավորների գործունեությունը 1908-1915 թթ.» թեմայով թեկնածուական ատենախոսության վերաբերյալ

Օսմանյան կայսրությունում հայերի տարատեսակ ներկայության (տնտեսական, կրթական, մշակութային և այլն) մասին կան խորքային և արժեքավոր ուսումնասիրություններ: Սակայն մեր տարածաշրջանի բարդ աշխարհաքաղաքական գունապնակը ավելի ամբողջական դիտարկելու, ներկայումս էլ տեղի ունեցող որոշակի իրադարձությունների պատմական հիմքերն ու նախադեպերը ընկալելու տեսանկյունից առանձին կարևորություն ունեն Օսմանյան կայսրության հատկապես վերջին փուլում հայերի քաղաքական ներկայության մասին ուսումնասիրությունները: Դրանք միևնույն ժամանակ 20-րդ դարում հայկական քաղաքական մտքի ձևավորման, ընթացքի, ձիշտ և սխալ գնահատականների, տարածաշրջանային հարցերի նկատմամբ մոտեցումների պատմությունը ամբողջացնելու միտված աշխատանքներ կարող ենք համարել:

Այս առումով ուշագրավ և գիտական կարևորություն ու արդիականություն պարունակող աշխատություն է Նարեկ Մարտիրոսյանի թեկնածուական ատենախոսությունը, որը նվիրված է 1908-1915 թվականներին օսմանյան խորհրդարանում հայազգի պատգամավորների ծավալած տարաբնույթ գործունեությանը: Աշխատանքը իրականացվել է արխիվային նյութերի և փաստաթղթերի, հուշագրությունների, մամուլի, աշխատությունների, գիտական ուսումնասիրությունների և հոդվածների քննության հիման վրա:

Ատենախոսությունը բաղկացած է երեք գլխից, որից առաջինում ներկայացվում է Օսմանյան կայսրության իրավաքաղաքական համապատկերը նշված ժամանակաշրջանում, մասնավորապես երիտրուրքական հեղաշրջումը, սահմանադրական կարգերի վերահաստատումը, խորհրդարանի ձևավորումը: Այս

զլիում ներկայացվում է նաև հայազգի պատգամավորների քաղաքական դիրքավորումը, տարբեր հարցերի շուրջ տեսակետների ձևավորումը: Հատուկ անդրադարձ կա 1909 թ. Աղանայի կոտորածներին քաղաքական և իրավական գնահատական տալու հարցում հայ պատգամավորների իրականացված ջանքերին: Երկրորդ զլիում քննության են առնվում օսմանյան խորհրդարանի գործունեության այն ուղղությունները, որոնք վերաբերում են վարչատնտեսական, սոցիալական, դատաիրավական, հողային և այլ խնդիրներին: Բնականաբար, ուշադրության կենտրոնում է պահպում հայությանը մտահոգող խնդիրներն ու այդ ուղղությամբ հայազգի պատգամավորների իրականացրած կոնկրետ քայլերը, որոնց մեջ հատկապես կարևորներից եր Օսմանյան կայսրությունում հայերի զինակոչի հարցը: Երրորդ զլուխը, որն արծարծված խնդիրների տեսանկյունից ամենակարևորն է, նվիրված է թե՝ տարածաշրջանային և միջազգային տեսանկյունից ամենաբարդ, և թե՝ հայ ժողովրդի պատմության մեջ ամենառողբերգական փուլում՝ 1912-1915 թթ. օսմանյան խորհրդարանի հայազգի պատգամավորների գործունեությանը: Բնական է, որ այդ փուլում հայ պատգամավորներին մտահոգող կարևորագույն հարցը հայությանը սպանդից փրկելու հաճախ հուսահատ ուղիների փնտրությն էր:

Հարկ ենք համարում նշել, որ ատենախոսը ուսումնասիրելով հայազգի պատգամավորների այդ փուլի գործունեությունը հստակ և անկողմնակալ գնահատական է տալիս ու մատնանշում ինչպես դրական քայլերը, այնպես էլ սխալներն ու ճակատագրական վրիպումները: Օրինակ՝ խոսելով Առաջին համաշխարհային պատերազմի մասին ատենախոսը նշում է, որ այն «հանկարծակի բերեց հայ պատգամավորներին» (էջ 163) և նրանցից ամենաիրատեսական կանխատեսումներ անող Գրիգոր Զոհրապը սխալվել է իր վերլուծություններում և պատերազմի հավանական ընթացքի ու հետևանքների վերաբերյալ գնահատականներում, ինչն ունեցել է նաև ճակատագրական նշանակություն հայ ժողովրդի համար: Չնայած հաջորդիվ հանդիպում են նաև մեջբերումներ նույն

Զոհրապի այլ ձևակերպումներից, որոնք խոսում էին, որ նա արդեն գիտակցել է մոտալուտ արհավիրքի անխուսափելիությունն ու ողբերգականությունը (էջ 164):

Ատենախոսության համար ընտրված թեման, խնդրի սահմանումը, ժամանակագրական ընդգրկումն պարունակում են գիտական նորույթը: Աշխատանքում հստակ են շարադրված նաև ատենախոսության նպատակներն ու խնդիրները: Թեման ունի արդիականություն ոչ միայն գիտական տեսանկյունից, այլև քաղաքական ու կարող է դառնալ լավ հիմք արդեն հետազայում՝ թուրքիայի Հանրապետությունում, ինչպես նաև ընդհուպ մեր օրերում խորհրդարանական գործունեություն ծավալած ու ծավալող հայազագի գործիչների քաղաքական վարքագիծն ուսումնասիրելու, թուրքական քաղաքական մտածելակերպի ու գործելակերպի որոշ շարունակական միտումները ընկալելու համար:

Ատենախոսության հետ կապված ունենք որոշ դիտարկումներ և առաջարկներ, որոնց մի մասը օգտակար կլինեն նաև աշխատանքը հրատարակության պատրաստելու պարագայում:

1. Աշխատանքում նկատվում են որոշ կրկնություններ (օրինակ էջ 13), հղկման կարիք ունեցող ձևակերպումներ օրինակ «ցուցադրել իթթիհատի իրականացրած ցեղասպանությունը» (էջ 6), երբեմն առավելապես էմոցիոնալ տերմինների կիրառում՝ «Եվրոպայում ծվարած երիտրուրքեր» (էջ 22), «թուրք զլսավոր եղեռնազործ» (էջ 54): Իսկ խոսելով հայերի զանգվածային կոտորածների, կամ առանձին անհատների սպանությունների մասին՝ պետք է խուսափել «ոչնչացնել» բառի կիրառումից (էջ 168, 169):

2. Գովելի է, որ ատենախոսության մեջ օգտագործվել են թուրքերեն նյութեր, այդ թվում օսմանյան խորհրդարանի արձանագրություններ, առանձին գործիչների հուշեր, սակայն կարելի էր ավելացնել նաև օրինակ՝ թուրք ազգայնամոլ գործիշ Մրգա Նուրի ստվարածավալ հուշերը, որտեղ մանրամասներ կան հայ պատգամավորների հետ նրա շփումների մասին, ինչպես նաև ընդգծված ուսախտական գնահատականներ:

3. Ատենախոսության մեջ նկատվում են նաև շատ սակավաթիվ անձտություններ. օրինակ՝ խոսելով 1914 թվականին օսմանյան խորհրդարանի բացման մասին՝ նշվում է սուլթան Աբդուլ Մեջիդ V (էջ 149), այնինչ պետք է լինի Մեհմեթ V: Հայկական տեղանունները ատենախոսության մեջ կիրառվել գրագետ և ճշգրիտ անվանումներով, սակայն օրինակ՝ էջ 89-ում սպրինգ է Սըլվազ տեղանունը Սեբաստիայի փոխարեն:

4. Որոշակի ոչ հստակություն կա նաև երիտրուրքերի գաղափարախոսական ուղղվածության մասին սահմանումներում: Օրինակ՝ էջ 161-ում նշվում է. «պատերազմի նախօրեին պանխալամիզմի քաղաքականություն որդեգրած երիտրուրքերը», իսկ հաջորդ էջում՝ «իթթիհատական պարագլուխների իրական նպատակը համարուրանական ցնորամիտ ծրագրերի իրականցումն էր»: Թերևս Ճիշտ կլինի նշել, որ այդ ժամանակ արդեն երիտրուրքերի համար գերակա գաղափարախոսություն էր պանթյուրքիզմը, պանթուրանիզմը, սակայն պանխալամիզմից ու պանօսմանիզմից պահպանվել էին որոշակի տարրեր:


5. Ցանկալի կլիներ կամ տողատակերում կամ տեքստում համառոտ պարզաբանումներ տրվեր որոշակի անձանց և տերմինների հետ կապված: Օրինակ՝ ավելորդ չեր լինի ներկայացնել Մեհմեթ Սարահեթթինի կենսագրությունն ու գործունեությունը, որի մասին խոսվում է, կամ բացատրվեր, թե ինչ է նշանակում էսնաֆական հարկը:

Նշված դիտողությունները, սակայն, չեն ազդում աշխատանքի ընդհանուր բնույթի վրա. այն իրականացված է գիտական պատշաճ մակարդակով, հմակարգված է, ունի կուռ տրամաբանություն, արդիական է և պարունակում է գիտական նորույթ: Թեմայի վերաբերյալ ատենախոսի հրապարակված հոդվածները և սեղմագիրը արտացոլում են աշխատանքի դրույթները: Ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ ԲԿԳ կոմիտեի պահանջներին, իսկ ատենախոսը՝ Նարեկ

Միքայելի Մարտիրոսյանը արժանի է իր հայցած պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի՝ E.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ:

*Պաշտոնական ընդիմախոս  
պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր  
Ռուբեն Հովհաննեսի Մելքոնյան*

06.11.2025 թ.



Ռուբեն Մելքոնյանի ստորագրությունը հաստատում եմ:

ԵՊՀ գիտքարտուղար՝ բ.գ.թ., դոցենտ Մ. Հովհաննեսյան

